ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ ՄԱՐԻԱՄ ԹՈՐՈՍՅԱՆԻ՝ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ԲԵՌԼԻՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

Մարիամ Թորոսյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թվայնացման վարչության գլխավոր մասնագետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (ք. Բեռլին), 2023թ. հուլիսի 19-21-ը:

4. **Հրավիրող կողմը.**

Բեռլինի թվային հասարակության ինստիտուտ:

5. **Գործուղման նպատակը.**

Մասնակցություն 2023թ. հուլիսի 19-ից 21-ը ք. Բեռլինում տեղի ունեցած «Կիբեռդիվանագիտություն և կիբեռքաղաքականություն» դասընթացին:

6. **Քննարկված թեմաները.**

Կիբեռդիվանագիտություն, կիբեռ ռիսկ, թվային տեխնոլոգիա, կիբեռ դիմացկունություն, կիբեռպաշտպանություն, միջազգային անվտանգություն և Եվրոպական միության կիբեռքաղաքականություն:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Թիրախային լսարանը Հարավարևելյան Եվրոպայի կառավարությունների դիվանագիտական և քաղաքականություն մշակող համայնքներն են, որոնք ներգրավված են ազգային և միջազգային կիբեռ խնդիրների վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներում (քաղաքականություն, դիվանագիտություն, միջադեպերի արձագանքում, սպառնալիքների վերլուծություն/հետախուզություն և այլն), ինչպես նաև կազմակերպությունները, որոնք զբաղվում են տարածաշրջանային պետությունների միջև ոլորտային համագործակցության համակարգմամբ:

Դասընթացի շրջանակում ներկայացվել են միջազգային և գլոբալ կիբեռհիմնախնդիրները, մասնավորապես ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում, ԵՄ-ում և այլ միջազգային կազմակերպություններում առկա մոտեցումների ոլորտային մարտահրավերների հաղթահարման վերաբերյալ: Նկարագրվել են կիբեռդիվանագիտության առանցքային ուղղությունները՝ միջազգային իրավունքի կիրառում, պետական պատասխանատու վարքագծի նորմեր և վստահության ամրապնդման միջոցներ:

Դասընթացի շրջանակում տեղի են ունեցել քննարկումներ հետևյալ թեմաների վերաբերյալ՝

- Տրամադրել ընդհանուր պատկերացում հասարակության և տնտեսության վրա ազդող տեխնոլոգիական փոփոխությունների մասին:
- Ընդհանուր պատկերացումներ կիբեռ սպառնալիքներից և խոցելիություններից բխող ռիսկերի վերաբերյալ:
- Ընդհանուր ակնարկ ՄԱԿ-ում, ԵՄ-ում, ԵԱՀԿ-ում և այլ կազմակերպություններում կիբեռդիվանագիտության նախաձեռնությունների վերաբերյալ:
- Կիբեռքաղաքականության, կիբեռդիմացկունության և կիբեռհանցագործության ոլորտներում Եվրոպական միության քաղաքականության ներկայացում:
- Երկրի դեմ իրականացված կիբեռ գործողության իրատեսական ճգնաժամային արձագանքման սցենարի ուսումնասիրություն:
- Ռազմավարական և վերլուծական գործիքների ուսումնասիրություն:

Հուլիսի 19-ին տեղի են ունեցել դասընթացներ հետևյալ թեմաներով.

1. Կիբեռ և թվային դիվանագիտության ներկայացում,
2. Կիբեռսպառնալիքների և խոցելիությունների ներկայացում,
3. Կիբեռդիմացկունությունը և կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանությունը կիբեռտարածությունում,
4. Կիբեռ գործողության վերլուծություն և վերագրում:

Հուլիսի 20-ին տեղի է ունեցել դասընթացներ և քննարկումներ հետևյալ թեմաներով.

1. ՄԱԿ-ի առաջին կոմիտեի կիբեռհանցագործությունների դեմ պայքարի գործընթացներ, Կիբեռմիջավայրում պետության պատասխանատու վարքագծի շրջանակ - միջազգային իրավունք, կիբեռնորմեր, կիբեռտարածությունում վստահության ամրապնդման միջոցառումներ (CBMs), կարողությունների զարգացում:

2. ԵՄ կիբեռքաղաքականությունների ներկայացում. արտաքին կիբեռ քաղաքականություն, ԵՄ կիբեռդիվանագիտության գործիքակազմ, ԵՄ կիբեռդիմացկունության քաղաքականություն:

3. Տարածաշրջանային կազմակերպությունների դերը. ԵԱՀԿ կիբեռվստահության ամրապնդման միջոցառումներ:

Հուլիսի 21-ի օրակարգում ներառված էին հետևյալ թեմաներով քննարկումներ.

1. Կիբեռհանցագործություններ, ՄԱԿ-ի երրորդ կոմիտեի կիբեռհանցագործությունների դեմ պայքարի գործընթացներ, Եվրոպայի խորհրդի կիբեռհանցագործությունների դեմ պայքարի գործընթացներ, Կիբեռհանցագործությունների Բուդապեշտի կոնվենցիա:

2. Կիբեռ միջավայրում պետության վարքագծի նկատմամբ կիրառելի միջազգային իրավունք:

3. Գործնական աշխատանք. Կիբեռ օպերացիային միացյալ եվրոպական պատասխանի ձևակերպում:

Աշխատաժողովի ավարտին ձեռք բերվեց պայմանավորվածություն համագործակցության շարունակականությունը ապահովելու համար:

Աշխատաժողովի ընթացքում չափելի արդյունքներն են.

- Աշխատաժողովի ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն Կառավարման և տեխնոլոգիաների եվրոպական դպրոց, Թվային հասարակության Ինստիտուտի տնօրեն Հելի Թիրմա Քլարի հետ, Կիբեռանվտանգության ռազմավարության և քաղաքականության մշակման դեպքում, փորձագիտական միջազգային կարծիք ստանալ նախագծերի վերաբերյալ ինչպես նաև աջակցություն ստանալ նախագծերի նախնական մշակման փուլում:
- Կապեր և ծանոթություններ են հաստատվել մասնակից 10 երկրների ներկայացուցիչների հետ կիբեռանվտանգության և կիբեռդիվանագիտության ոլորտում փորձի փոխանակման համար:
- Կապ է հաստատվել Մոլդովայի Հանրապետության տնտեսական զարգացման և թվայնացման նախարարության Տեղեկատվական տեխնոլոգիաների և թվայնացման ոլորտում քաղաքականությունների մշակման վարչության հիմնական խորհրդատու Ինգա Պասկալի հետ, ով հանդիսանում է գործընկեր նաև EU4Digital ծրագրով և պայմանավորվածություններ եմ ձեռք բերել և՛ կիբեռանվտանգության,

և՛ թվայնացման, և՛ EU4Digital ծրագրերի շրջանակներում սերտ համագործակցության համար:

- Ուսումնասիրվել է Կիբեռդիվանագիտության 11 նորմերը:
- Ուսումնասիրվել է կիբեռտարածությունում վստահության ամրապնդման 16 միջոցառումները (CBMs) և դրանց կազմակերպման մեխանիզմները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հաշվի առնելով, որ դասընթացի ողջ բովանդակությունը կազմվել էր ՄԱԿ-ի Կիբեռդիվանագիտության առցանց դասընթացի բովանդակությամբ, առաջարկում եմ կիբեռդիվանագիտությանը առնչվող ՀՀ պետական մարմինների աշխատակիցներին ուսումնասիրել այդ դասընթացը, որը հնարավորություն կտա ռազմավարական որոշումներ կայացնելիս և քաղաքականություն մշակելիս հիմքում ունենալ միջազգային ընդունված նորմերը և քաղաքականության հիմնական ուղղությունները:

Միաժամանակ, դասընթացի ժամանակ ներկայացվել է նաև ԵԱՀԿ առցանց դասընթացների հարթակ, որը նույնպես ունի կիբեռանվտանգության վերաբերյալ բազմաթիվ դասընթացներ: Հարթակի հղումը՝ https://elearning.osce.org/dashboard, որը նույնպես կարող է ներառվել պետական աշխատողների համար կազմակերպվող դասընթացներում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Մարիամ Թորոսյան

26.07.2023